ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2025 թվականի № 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 11.02.2015Թ. ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորման և կազմակերպման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ բեռնվածության չափորոշիչները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015թ. որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորման և կազմակերպման կարգը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի սկզբից ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն որոշման հավելված 1-ով սահմանված՝ ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողների ուսումնական բեռնվածության նվազագույն, առավելագույն և նախընտրելի ժամաքանակի մասին դրույթները չեն տարածվում 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի վրա:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
01.04.2025 թ. № 3 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողների (ամբիոնի պետ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ուսումնական ասիստենտ) ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքների նորմավորման և կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Ուսումնական աշխատանքների նորմավորման և կազմակերպման մասով սույն կարգը տարածվում է նաև Կրթահամալիրի ամբիոնների համատեղման կարգով դասախոսների (տվյալ ամբիոնի հաստիքային աշխատող չհամարվող Կրթահամալիրի հաստիքային աշխատողներ) և Կրթահամալիրի պայմանագրային հիմունքներով դասախոսների վրա:

2. Ուսումնական տարվա առաջին կիսամյակն ընդգրկում է ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածը, իսկ երկրորդ կիսամյակն ընդգրկում է ընթացիկ տարվա փետրվարի 1-ից մինչև օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածը:

3. Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար ամբիոնի գործունեությունը պլանավորելու ընթացքում ամբիոնի պետը որոշում է ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, որոնք ամբիոնի պրոֆեսորադասախոսական հաստիքային անձնակազմի կողմից ենթակա են պարտադիր կատարման՝ ապահովելով ամբիոնի հաստիքային աշխատողների միջև այդ աշխատանքների համաչափ բաշխումը: Անհրաժեշտության դեպքում, Կրթահամալիրի ռեկտորի համաձայնությամբ, ամբիոնի պետը ամբիոնի ուսումնական բեռնվածությունը հատկացնում է նաև համատեղման կարգով դասախոսներին և (կամ) պայմանագրային հիմունքներով դասախոսներին:

4. Ամբիոնների հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեջ չմտնող համատեղման կարգով դասախոսի ուսումնական պարապմունքների ընդհանուր շաբաթական ժամաքանակը չի կարող գերազանցել 8 ժամը:

5. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողի ուսումնական բեռնվածությունը մեկ ուսումնական տարում պետք է կազմի 450-ից մինչև 900 ժամ (ուսումնական ասիստենտի համար՝ 300-900 ժամ), որը պետք է ներառի առնվազն 150 ժամ դասախոսություն, սեմինար, գործնական, լաբորատոր պարապմունքներ անցկացնելու, քննություններ և ստուգարքներ ընդունելու ժամաքանակ:

6. Ամբիոնի պետը տարբերակում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողների ուսումնական բեռնվածությունը՝ կախված զբաղեցրած պաշտոնից: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողների նախընտրելի ուսումնական բեռնվածությունը մեկ ուսումնական տարում հետևյալն է.

1) ամբիոնի պետ ՝ 450-ից մինչև 600 ժամ,
2) պրոֆեսոր՝ 450-ից մինչև 650 ժամ,
3) դոցենտ՝ 450-ից մինչև 700 ժամ,

4) ավագ դասախոս՝ 450-ից մինչև 800 ժամ,
5) դասախոս՝ 450-ից մինչև 900 ժամ,
6) ուսումնական ասիստենտ՝ 300-ից մինչև 700 ժամ:

7. Եթե աշխատողը նշանակված է ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ոչ ամբողջական դրույքով պաշտոնի, ապա նրա ուսումնական բեռնվածության նվազագույն, առավելագույն և նախընտրելի ժամաքանակը հաշվարկելիս այն համամասնորեն նվազեցվում է աշխատողի զբաղեցրած պաշտոնի ոչ ամբողջական դրույքին համապատասխան:

8. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբից առնվազն 5 աշխատանքային օր առաջ ամբիոնի պետը՝

1) ուսումնական ստորաբաժանման պետի հաստատմանն է ներկայացնում ամբիոնի կիսամյակային աշխատանքային պլանը, որում արտացոլվում են պլանավորված ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները,

2) Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետին է ներկայացնում տեղեկանք տվյալ պահի դրությամբ կիսամյակի համար նախատեսված առարկաները (մոդուլները, դասընթացները) ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջև բաշխելու մասին՝ ըստ կուրսերի, հոսքերի, ուսումնական խմբերի (դասակների) և ուսումնական պարապմունքների տեսակների,

3) Կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի պետին է ներկայացնում ամբիոնի կիսամյակային աշխատանքային պլանից քաղվածք գիտահետազոտական աշխատանքների մասով:

9. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողի աշխատանքային ժամանակի բյուջեն որոշող հիմնական փաստաթուղթն անհատական աշխատանքային պլանն է, որն աշխատողը կազմում է ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար: Անհատական աշխատանքային պլանները քննարկվում են ամբիոնի նիստում և հաստատվում ամբիոնի պետի կողմից յուրաքանչյուր կիսամյակի սկզբից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Ամբիոնի որոշմամբ կիսամյակի ընթացքում դրանցում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

10. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողը ամբիոնի պետին է ներկայացնում տվյալ կիսամյակում իր կողմից կատարված ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքների մասին հաշվետվությունը:

11. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում ամբիոնի պետը՝

1) ուսումնական ստորաբաժանման պետի հաստատմանն է ներկայացնում ամբիոնի կողմից տվյալ կիսամյակում կատարված ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքների մասին հաշվետվությունը,

2) Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետին է ներկայացնում ամբիոնի կողմից տվյալ կիսամյակում Կրթահամալիրի բոլոր հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով կատարված ընդհանուր ուսումնական բեռնվածության և ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողների, համատեղման կարգով դասախոսների և պայմանագրային հիմունքներով դասախոսների կողմից տվյալ կիսամյակում կատարված անհատական ուսումնական բեռնվածության հաշվարկը,

3) Կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի պետին է ներկայացնում ամբիոնի կիսամյակային հաշվետվությունից քաղվածք գիտահետազոտական աշխատանքների մասով:

12. Եթե նույն կուրսի, հոսքի, ուսումնական խմբի (դասակի) համար կատարված միասնական ուսումնական աշխատանքի ժամանակահատվածն ընդգրկվում է երկու տարբեր կիսամյակների ժամանակահատվածներում, ապա այդ ուսումնական աշխատանքի ժամերն արտացոլվում են առանձին-առանձին, այն կիսամյակների ուսումնական բեռնվածության հաշվարկներում, որոնցում դրանք փաստացի կատարվել են:

13. Միջամբիոնային ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները արտացոլվում են դրանց կատարմանը ներգրավված բոլոր ամբիոնների և համապատասխան աշխատողների աշխատանքային պլաններում, հաշվետվություններում և ուսումնական բեռնվածության հաշվարկներում:

14. Կրթահամալիրի ուսումնական աշխատանքների կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժինը ստուգում է ամբիոնների կողմից ներկայացված՝ ընդհանուր և անհատական ուսումնական բեռնվածության հաշվարկները՝ ուսումնական բեռնվածության չափորոշիչներին համապատասխանության և հաշվարկներում ներկայացված ուսումնական աշխատանքների փաստացի կատարման տեսանկյունից: Ներկայացված հաշվարկներում սխալներ հայտնաբերելու դեպքում դրանք վերադարձվում են ամբիոններին՝ սխալները շտկելու համար: Հաշվարկներում ներկայացված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների հայտնաբերման դեպքում Կրթահամալիրի ուսումնական աշխատանքների կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետն այդ մասին զեկուցում է Կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորին:

15. Ստուգված հաշվարկները Կրթահամալիրի ուսումնական աշխատանքների կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետը ներկայացնում է ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի հաստատմանը:

16. Եթե ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքային աշխատողի անհատական ուսումնական բեռնվածությունը (այդ թվում մյուս ամբիոններում ունեցած ուսումնական բեռնվածությունը) ուսումնական տարում կազմել է 900 ժամից ավելի կամ 450 ժամից պակաս (ուսումնական ասիստենտի համար՝ 300 ժամից պակաս), ապա ամբիոնի պետը Կրթահամալիրի ռեկտորին ներկայացված դիմումով պետք է պատճառաբանի տվյալ աշխատողի կողմից ուսումնական բեռնվածության գերակատարումը կամ թերակատարումը: Ամբիոնի պետի դիմումի քննարկման արդյունքներով Կրթահամալիրի ռեկտորը կայացնում է համապատասխան կառավարչական որոշումներ՝ ելնելով տվիալ աշխատողի կողմից ուսումնական բեռնվածության գերակատարման կամ թերակատարման պատճառներից, ինչպես նաև ուսումնական տարվա ընթացքում տվյալ աշխատողի կողմից կատարված ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ բեռնվածության ընդհանուր ժամաքանակից:

Հավելված 2
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
__.__.2025 թ. № ____ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ			
h/h	**ուսումնական աշխատանքի տեսակը**	**աշխատանքի ծավալի հաշվարկի չափորոշիչը**	**ծանոթագրություն**
1.	մեկ ակադեմիական ժամ տևողությամբ ուսումնական պարապմունքի (դասախոսություն, սեմինար, գործնական, սցենարային պարապմունք, լաբորատոր աշխատանք, վարժախաղ) անցկացում կամ 60 րոպե տևողությամբ ուսումնական պարապմունքի (դասախոսություն, սեմինար, գործնական, սցենարային պարապմունք, լաբորատոր աշխատանք, վարժախաղ) անցկացում (լրացուցիչ կրթական ծրագրերով)	1 ժամ	մեկ հոսքին, իսկ առանձին ուսումնական խմբերով (դասակներով) անցկացնելու դեպքում՝ մեկ ուսումնական խմբին (դասակին)
2.	կուրսային աշխատանքի (նախագծի) ղեկավարում՝ ներառյալ խորհրդատվությունները, գրախոսումը և պաշտպանության ընդունումը	3 ժամ	մեկ կուրսային աշխատանքին
3.	ավարտական աշխատանքի ղեկավարում	30 ժամ	մեկ ավարտական աշխատանքին, մեկ ղեկավարին մեկ կիսամյակում առավելագույնը 8 ավարտական աշխատանք
4.	ավարտական աշխատանքի գրախոսում	4 ժամ	մեկ ավարտական աշխատանքին
5.	մագիստրոսական թեզի ղեկավարում	60 ժամ	մեկ մագիստրոսական թեզին, մեկ ղեկավարին մեկ կիսամյակում առավելագույնը 5 մագիստրոսական թեզ, 60 ժամը բաժանվում է առկա ուսուցման երեք կիսամյակների միջև 20-ական ժամով, իսկ հեռակա ուսուցման չորս կիսամյակների միջև 15-ական ժամով
6.	մագիստրոսական թեզի գրախոսում	6 ժամ	մեկ մագիստրոսական թեզին
7.	պրակտիկայի ղեկավարում	3 ժամ	մեկ աշխատանքային օրվա համար
8.	անհատական կարգով անցկացվող պրակտիկայի ղեկավարում	1 ժամ	մեկ սովորողին մեկ շաբաթում
9.	պրակտիկայի հաշվետվության ստուգում և պաշտպանության ընդունում	1/3 ժամ	մեկ սովորողին
10.	խորհրդատվությունների անցկացում կիսամյակային քննություններից առաջ	2 ժամ	մեկ ուսումնական խմբին
11.	ստուգարքի, դիֆերենցված ստուգարքի, բանավոր քննության ընդունում, ընթացիկ ստուգման անցկացում	1/3 ժամ	մեկ սովորողին
12.	ուսումնական պարապմունքից դուրս գրավոր քննության անցկացում	2 ժամ	մեկ ուսումնական խմբին (դասակին)
13.	միջանկյալ գրավոր քննության, ստուգողական գրավոր աշխատանքի ստուգում (բացի թեստային առաջադրանքներից)	1/2 ժամ	մեկ գրավոր աշխատանքին
14.	թեստային առաջադրանքների ձևով միջանկյալ քննության, ստուգողական աշխատանքի ստուգում	1/3 ժամ	մեկ սովորողի՝ մինչև 20 թեստ բովանդակող թեստային առաջադրանքին
15.	պետական քննության ընդունում, ավարտական աշխատանքի պաշտպանության ընդունում	2/3 ժամ	մեկ սովորողին, պետական քննական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին ոչ ավելի, քան օրական 8 ժամ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ			
h/h	**ուսումնամեթոդական աշխատանքի տեսակը**	**աշխատանքի ծավալի հաշվարկի չափորոշիչը**	**ծանոթագրություն**
1.	առարկայի (դասընթացի, մոդուլի) նոր առարկայական նկարագրի (ծրագրի) մշակում	20 ժամ	մեկ առարկայական նկարագրին (ծրագրին)
2.	առարկայի (դասընթացի, մոդուլի) առարկայական նկարագրի (ծրագրի) վերամշակում	10 ժամ	մեկ առարկայական նկարագրին (ծրագրին)
3.	ուսումնական պարապմունքի մեթոդական պլանի կազմում	1/2 ժամ	մեկ պլանին
4.	դասախոսության համար դասախոսության տեքստի պատրաստում (հաստատված ամբիոնի նիստում)	1 ժամ	մեկ ժամ դասախասության համար նախատեված դասախոսության տեքստին
5.	սեմինար, գործնական, սցենարային պարապմունքի, լաբորատոր աշխատանքի, վարժախաղի համար ուսումնամեթոդական նյութերի (առաջադրանքներ, թեստեր, խնդիրներ, սահիկաշարեր, սխեմաներ, մակետներ, ուսումնական գործեր, բլանկներ, սցենարներ, տեսանյութեր և այլն) մշակում (հաստատված ամբիոնի նիստում)	1 ժամ	մեկ ժամ պարապմունքի համար նախատեսված ուսումնամեթոդական նյութերին
6.	դասավանդման մեթոդիկային կամ ուսումնամեթոդական այլ հարցերին վերաբերող հոդվածի հրատարակում	20 ժամ	մեկ հոդվածին
7.	դասավանդման մեթոդիկային կամ ուսումնամեթոդական այլ հարցերին վերաբերող հոդվածի գրախոսում	2 ժամ	մեկ հոդվածին
8.	Կրթահամալիրի կամ այլ բուհի գիտական խորհրդի կամ մեթոդական խորհրդի կողմից տպագրության երաշխավորված ուսումնական ձեռնարկի, դասախոսությունների դասընթացի, դասախոսությունների համառոտագրության, ուսումնագործնական, ուսումնամեթոդական, ուսումնատեղեկատվական կամ ուսումնադիդակտիկ հրատարակության հրատարակում	30 ժամ	հրատարակության մեկ հեղինակային թերթին (40 հազար տպագրական նիշ՝ տառ, կետադրական նշան, թիվ, բառերի միջակա բացատ), միջինացված՝ A4 չափի թղթի 16 էջ ծավալով տպագիր տեքստ, մեկ հեղինակին մեկ կիսամյակում ոչ ավելի, քան 300 ժամ
9.	Կրթահամալիրի կամ այլ բուհի գիտական խորհրդի կամ մեթոդական խորհրդի կողմից տպագրության երաշխավորված ուսումնական ձեռնարկի, դասախոսությունների դասընթացի, դասախոսությունների համառոտագրության, ուսումնագործնական, ուսումնամեթոդական, ուսումնատեղեկատվական կամ ուսումնադիդակտիկ հրատարակության լրամշակում և վերահրատարակում	10 ժամ	հրատարակության մեկ հեղինակային թերթին
10.	ուսումնական ձեռնարկի, դասախոսությունների դասընթացի, դասախոսությունների համառոտագրության, ուսումնագործնական, ուսումնամեթոդական, ուսումնատեղեկատվական կամ ուսումնադիդակտիկ հրատարակության գրախոսում	1 ժամ	հրատարակության մեկ հեղինակային թերթին
11.	դիֆերենցված ստուգարքների, միջանկյալ, կիսամյակային և պետական քննությունների նոր տոմսերի կազմում	8 ժամ	մեկ դիֆերենցված ստուգարքին (քննությանը)
12.	դիֆերենցված ստուգարքների, միջանկյալ, կիսամյակային և պետական քննությունների տոմսերի լրամշակում, ուղղում	4 ժամ	մեկ դիֆերենցված ստուգարքին (քննությանը)
13.	դիֆերենցված ստուգարքների, միջանկյալ, կիսամյակային և պետական քննությունների համար խնդիրների, առաջադրանքների, թեստերի կազմում	16 ժամ	մեկ դիֆերենցված ստուգարքին (քննությանը)
14.	դիֆերենցված ստուգարքների, միջանկյալ, կիսամյակային և պետական քննությունների համար խնդիրների, առաջադրանքների, թեստերի լրամշակում, ուղղում	8 ժամ	մեկ դիֆերենցված ստուգարքին (քննությանը)
15.	պրակտիկայի ծրագրի կազմում	10 ժամ	մեկ ծրագրին
16.	ստուգողական, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ցանկի կազմում	10 ժամ	մեկ ցանկին

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ			
h/h	**գիտահետազոտական աշխատանքի տեսակը**	**աշխատանքի ծավալի հաշվարկի չափորոշիչը**	**ծանոթագրություն**
1.	գիտական հոդվածի հրատարակում	20 ժամ	մեկ հոդվածին
2.	գիտական հոդվածի գրախոսում	2 ժամ	մեկ հոդվածին
3.	Կրթահամալիրի կամ այլ բուհի գիտական խորհրդի կամ մեթոդական խորհրդի կողմից տպագրության երաշխավորված մենագրության հրատարակում	30 ժամ	հրատարակության մեկ հեղինակային թերթին, մեկ հեղինակին մեկ կիսամյակում ոչ ավելի, քան 300 ժամ
4.	Կրթահամալիրի կամ այլ բուհի գիտական խորհրդի կամ մեթոդական խորհրդի կողմից տպագրության երաշխավորված մենագրության լրամշակում և վերահրատարակում	10 ժամ	հրատարակության մեկ հեղինակային թերթին, մեկ հեղինակին մեկ կիսամյակում ոչ ավելի, քան 300 ժամ
5.	մենագրության գրախոսում	1 ժամ	հրատարակության մեկ հեղինակային թերթին
6.	գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամի կարգավիճակով մասնակցություն մասնագիտական խորհրդի նիստին	2 ժամ	մեկ նիստին
7.	սովորողների հոգեբանական թեստավորման համար թեստերի մշակում	20 ժամ	մեկ թեստային փաթեթին
8.	սովորողների հոգեբանական թեստավորում, ներառյալ՝ արդյունքների վերլուծությունը	10 ժամ	մեկ ուսումնական խմբն (դասակին)
9.	սովորողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարում՝ սովորողի կողմից գիտական զեկուցման, հոդվածի ներկայացմամբ	5 ժամ	մեկ զեկուցման, հոդվածի համար
10.	գիտական աստիճանի հայցման ատենախոսության մշակում	30 ժամ	ատենախոսության մեկ հեղինակային թերթին, մեկ կիսամյակում աչ ավելի, քան 100 ժամ
11.	գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագրի գրախոսում	2 ժամ	մեկ սեղմագրին
12.	գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կամ պաշտոնական ընդդիմախոսի կարծիքի պատրաստում	8 ժամ	մեկ կարծիքին
13.	ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարում	50 ժամ	մեկ ասպիրանտին, մեկ հայցորդին մեկ տարում
14.	կլոր սեղան-քննարկման կամ գիտական սեմինարի կազմակերպում և անցկացում	10 ժամ	մեկ միջոցառմանը
15.	զեկուցողի (բանախոսի) կարգավիճակով մասնակցություն Կրթահամալիրի կամ այլ ուսումնական հաստատությունների կամ գիտական կազմակերպությունների գիտական համաժողովին կամ այլ համարժեք ներկայացուցչական միջոցառմանը՝ մասնակցությունը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում	6 ժամ	մեկ միջոցառմանը

ԱՅԼ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ			
հ/հ	**այլ աշխատանքի տեսակը**	**աշխատանքի ծավալի հաշվարկի չափորոշիչը**	**ծանոթագրություն**
1.	սովորողների մասնակցությամբ հանդիսավոր, ներկայացուցչական միջոցառումների, հանդիպումների, ճանաչողական այցերի, մրցույթների և վիկտորինաների կազմակերպում և անցկացում	8 ժամ	մեկ միջոցառմանը
2.	ամբիոնին կից գիտական խմբակի, բանավեճի ակումբի, սպարտային, մշակութային կամ այլ խմբակի նիստի կազմակերպում և անցկացում	4 ժամ	մեկ նիստին
3.	իրավաբանական կլինիկայի գործունեություն (դասընթացներ և խորհրդատվություն)	1 ժամ	փաստացի կատարված աշխատանքի մեկ ժամին, մեկ շաբաթում մեկ աշխատողին ոչ ավելի, քան 4 ժամ
4.	ուսումնական խմբի ղեկավարի (կուրատորի) աշխատանք	1 ժամ	փաստացի կատարված աշխատանքի մեկ ժամին, մեկ կիսամյակում մեկ աշխատողին ոչ ավելի, քան 30 ժամ
5.	մենթորական աշխատանք սկսնակ դասախոսների հետ	1 ժամ	աշխատանքի 1 ժամին
6.	պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար մանկավարժական վարպետության պարապմունքների, վերապատրաստման դասընթացների անցկացում	1 ժամ	աշխատանքի 1 ժամին
7.	սովորողների համար խմբային հոգեբանական տրեյնինգների, հոգեբանական անհատական խորհրդատվության (հոգեբանական աջակցություն, հոգեբանական ուղեկցում) կազմակերպում և անցկացում	1 ժամ	փաստացի կատարված աշխատանքի մեկ ժամին, մեկ կիսամյակում մեկ աշխատողին ոչ ավելի, քան 30 ժամ
8.	վերահսկողական և փոխադարձ դասալսումների անցկացում և դասալսման մասին ակտի կազմում	4 ժամ	մեկ դասալսման համար
9.	ոստիկանության ծառայողների և փրկարար ծառայողների ատեստավորման մասնագիտական բաժնի թեստերի կազմում	1 ժամ	5 թեստի համար
10.	ոստիկանության ծառայողների և փրկարար ծառայողների ատեստավորման գործընթացի թեստավորման և ստուգարքի հանձնաժողովների անդամի կարգավիճակով աշխատանք	1 ժամ	աշխատանքի 1 ժամին
11.	Կրթահամալիրի ընդունող հանձնաժողովում, դրա քննական հանձնաժողովներում և հարցազրույցների հանձնաժողովների անդամի կարգավիճակով աշխատանք	1 ժամ	աշխատանքի 1 ժամին
12.	ոստիկանության ծառայողների ատեստավորման շրջանակներում գործնական հրաձգության պարապմունքների անցկացում	1 ժամ	աշխատանքի 1 ժամին
13.	ամբիոնի կիսամյակային ընդհանուր աշխատանքային պլանի կազմում	10 ժամ	ամբիոնի մեկ կիսամյակային ընդհանուր աշխատանքային պլանին
14.	ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեկ աշխատողի կիսամյակային անհատական աշխատանքային պլանի կազմում	4 ժամ	մեկ աշխատողի մեկ կիսամյակային անհատական աշխատանքային պլանին
15.	ամբիոնի կիսամյակային ընդհանուր հաշվետվության կազմում	10 ժամ	ամբիոնի մեկ կիսամյակային ընդհանուր հաշվետվությանը
16.	ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեկ աշխատողի կիսամյակային անհատական հաշվետվության կազմում	4 ժամ	մեկ աշխատողի մեկ կիսամյակային անհատական հաշվետվությանը
17.	ամբիոնի կիսամյակային ընդհանուր ուսումնական բեռնվածության հաշվարկի կազմում	20 ժամ	Ամբիոնի մեկ կիսամյակի ընդհանուր ուսումնական բեռնվածության հաշվարկին
18.	ամբիոնի աշխատողի կիսամյակային անհատական ուսումնական բեռնվածության հաշվարկի կազմում	4 ժամ	մեկ աշխատողի կիսամյակային անհատական ուսումնական բեռնվածության հաշվարկին
19.	մասնակցություն Կրթահամալիրի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի, մեթոդական խորհրդի, ուսումնանական ստորաբաժանման խորհրդի, ամբիոնի նիստին	2 ժամ	մեկ նիստին
20.	Կրթահամալիրի ռեկտորի հրամանով այլ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարում	8 ժամ	Կրթահամալիրի ռեկտորի հրամանով այլ պաշտոնի պարտականությունների

			ժամանակավոր կատարման մեկ շաբաթին
21.	ներքին գործերի նախարարության (այդ թվում՝ Կրթահամալիրի) կարիքների համար իրավական ակտերրի նախագծերի մշակում, մշակված նախագծերի մասին նկատառումների մշակում, Կրթահամալիրին հասցեագրված գրությունների պատասխանների մշակում	1 ժամ	A4 չափի թղթի 2 էջ ծավալով տպագիր տեքստ
22.	վերապատրաստումներին, փորձի փոխանակման և ճանաչողական այցերին, սեմինարներին, համաժողովներին, ներկայացուցչական միջոցոումներին մասնակցություն ունկնդրի կարգավիճակով	1 ժամ	փաստացի մասնակցության 1 ժամին, ոչ ավելի, քան օրական 8 ժամ